

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ 2014Թ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Մարզի բնակչության թիվը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 255000 մարդ, որը հանրապետության ողջ բնակչության 8.5%-ն է, որից 138500-ը քաղաքաբնակներ են (54.3%) և 116500-ը՝ գյուղաբնակներ (45.7%):

2014 թվականի ընթացքում մարզում ծնվածների թիվը կազմել է 3780 մարդ կամ նախորդ տարվա համեմատ 148-ով ավել, իսկ մահացածների թիվը ավելացել է 89-ով և կազմել 2297 մարդ: Բնական աճը կազմել է 1483 մարդ: Գրանցված ամուսնությունների թիվը նախորդ տարվա համեմատ ավելացել է 157-ով՝ կազմելով 1795, ամուսնալուծությունների թիվն ավելացել է 77-ով՝ կազմելով 356:

2014թ. մարզում արտադրված արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 167.4 մլրդ. դրամ նախորդ տարվա 166.0 մլրդ. դրամի դիմաց կամ աճը կազմել է 0.8 %: Նախորդ տարվա համեմատ աճ է գրանցվել մշակող արդյունաբերության ոլորտում՝ շուրջ 1.1 մլրդ. դրամի չափով, էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում՝ 2.6 մլրդ. դրամի, իսկ հանքագործական արդյունաբերության ոլորտում ցուցանիշը նվազել է 2.5 մլրդ. դրամով: Հաշվետու ժամանակաշրջանում աճ է գրանցվել հիմնականում խմիչքների (5.1%), կաշվե իրերի (9.1%) արտադրության բնագավառներում, նվազում է արձանագրվել սննդի (4.8%), դեղագործական ապրանքների (16.9%) և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության (11.0%) բնագավառներում:

Արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալն աճել է 0.4 %-ով՝ կազմելով 165.6 մլրդ դրամ:

Արտադրանքի իրացումը ներքին շուկայում կազմել է 121.1 մլրդ. դրամ, իսկ արտահանումը՝ 44.4 մլրդ. դրամ, այդ թվում՝ ԱՊՀ երկրներ արտահանվող արտադրանքի ծավալը՝ 29.3 մլրդ. դրամ և այլ երկրներ՝ 15.1 մլրդ. դրամ: Այսպիսով արտահանման ծավալը նախորդ տարվա համեմատ նվազել է 1.2 %-ով:

մլն. դրամ

	2013թ.	2014թ.	շեղում +/-	%
Թողարկված արտադրանքի ծավալը	166063.7	167357.5	1293.8	100.8
Արտադրանքի իրացման ծավալը	164966.6	165598.2	631.6	100.4
Արտահանման ծավալը, որից՝	44969.7	44450.3	-519.4	98.8
ԱՊՀ երկրներ	30782.8	29368.5	-1414.3	95.4
այլ երկրներ	14186.9	15081.8	894.9	106.3

2014թ. մարզում ֆինանսավորման բոլոր աղբյուրներով իրականացվել են 22.3 մլրդ. դրամի կապիտալ ներդրումներ, ինչը նախորդ տարվա համեմատ նվազել է 6.7 մլրդ. դրամով և կազմել է հանրապետությունում իրականացված կապիտալ ներդրումների 5.1%-ը:

2014թ. գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը կազմել է 59.8 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 3.1 մլրդ. դրամով կամ աճը կազմել է 5.4%:

2014թ. իրացվել է 15.3 հազ. տոննա միս նախորդ տարվա 14.7 հազ. տոննայի դիմաց (աճը՝ 4.1 %): Հաշվետու ժամանակաշրջանում արտադրվել է 64.8 հազ. տոննա կաթ նախորդ տարվա 57.9 տոննայի դիմաց (աճը՝ 11.9%) և 127.5 մլն. հատ ձու նախորդ տարվա 117.3 մլն. հատի դիմաց (աճը՝ 8.7 %):

Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը 2014թ. կազմել է 42.0 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ պակաս է 3.5 մլրդ. դրամով կամ նվազել է 7.7%-ով: Բնակչությանը մատուցած ծառայությունների ծավալը կազմել է 41.1 մլրդ. դրամ նախորդ տարվա 29.7 մլրդ. դրամի դիմաց կամ աճը կազմել է 38.4 %:

2014թ. մարզում գրանցված գործազուրկների թիվը կազմել է 6637 մարդ՝ նախորդ տարվա 5500-ի համեմատ: